ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ՆԻՍՏԻՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

ԵՐԵՎԱՆ 2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ՁԵԿՈՒՅՑ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ՆԻՍՏԻՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

ԵՐԵՎԱՆ 2023

ԱՐՏԱՀԵՐԹ ՁԵԿՈՒՅՑ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ՆԻՍՏԻՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվել են Բարձրագույն դատական խորհրդի՝ սույն թվականի հուլիսի 3-ի նիստին լրագրողների մասնագիտական գործունեության առերևույթ սահմանափակումների առնչությամբ մամուլում տարածված հրապարակումների մշտադիտարկում և ուսումնասիրություն՝ դատական վարույթին չմիջամտելու սկզբունքի պահպանմամբ:

Լրատվամիջոցներում տեղ գտած հրապարակումների համաձայն՝ սույն թվականի հուլիսի 3-ին տեղի է ունեցել Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի դռնփակ քննության արդյունքով որոշումը հրապարակելու դռնբաց նիստ, որին արգելվել է լրագրողների մուտքը նիստերի դահլիճ[1]: Միևնույն ժամանակ, Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքում լրագրողների համար առանձնացվել է առանձին սենյակ՝ նիստերի դահլիճից ուղիղ հեռարձակումը դիտելու նպատակով:

Հաշվի առնելով, որ տեղեկատվություն ստանալու իրավունքը ներառում է նաև տեղեկությունների հասանելիության իրավունքը, ինչի ապահովմանն է ուղղված լրագրողի մասնագիտական գործունեությունը՝ պետք է արձանագրել, որ լրագրողների և լրատվամիջոցների մասնագիտական պաշտպանված և արդյունավետ աշխատանքն ունի մեծ հանրային կարևորություն: Լրագրողների գործունեության անխոչընդոտ իրականացման երաշխիքները սահմանված են ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով, ներպետական այլ իրավական ակտերով, այնպես էլ միջազգային պայմանագրերով և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դիրքորոշումներով:

Չնայած այն հանգամանքին, որ սույն զեկույցի նախաձեռնման համար իբրև ազդակ են հանդիսացել Բարձրագույն դատական խորհրդի՝ հուլիսի 3-ի նիստի վերաբերյալ հրապարակային մտահոգությունները՝ այդուհանդերձ, զեկույցի նպատակն է անդրադարձ կատարելու առհասարակ համակարգային առումով առկա այն խնդիրներին, որոնք վերաբերում են դատական իշխանություն-լրագրող փոխգործակցությանն ու ըստ այդմ՝ դատական իշխանության գործունեության

[1] Հասանելի է https://factor.am/664001.html հղումով:

թափանցիկությանն ու հանրային հաշվետվողականությանը, և ներկայացնելու առաջարկություններ նշված փորձի կատարելագործման առնչությամբ:

Մասնավորապես, լրագրողական գործունեության անխոչընդոտ իրականացման, այդ համատեքստում հնարավոր սահմանափակումների և դրանց իրավաչափության հարցին հնարավոր է անդրադառնալ՝ նախ և առաջ հիմնվելով ոլորտին առնչվող միջազգային իրավական չափանիշների և համապատասխան նախադեպային պրակտիկայի վրա:

Այսպես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4 հանձնարարականը սահմանում է, որ խոսքի ազատության համար բարենպաստ միջավայրը պետք է ունենա մի շարք առանցքային հատկանիշներ, որոնք համակցության մեջ խոսքի և տեղեկատվության ազատության և ակտիվ հանրային բանավեճերի զարգացման պայմաններ կստեղծեն: Տեղեկություններ ստանալու իրավունքը ներառում է տեղեկությունների հասանելիության իրավունքը: Հասարակությունն ունի հանրային հետաքրքրություն ներկայացնող այնպիսի տեղեկություններ և գաղափարներ ստանալու իրավունք, որոնք լրատվական գործունեություն իրականացնողները խնդիր ունեն տարածելու: *Տեղեկությունների հավաքագրումը լրագրողական գործունեության կարևոր նախապատրաստական քայլ է և մամուլի ազատության պաշտպանության ենթակա բաղկացուցիչ մաս: Իսկ ինչ վերաբերում է վերջիններիս գործունեության սահմանափակմանը, ապա* լրագրողների և մամուլի այլ ներկայացուցիչների մասնակցությունը հանրային իրավաչափ մտահոգության հարցերով հանրային բանավեճերին չպետք է խոչընդոտվի, օրինակ, տեղեկությունը հասանելի դարձնելու միջոցները ծանրաբեռնելով կամ կամայական սահմանափակումներով, որոնք կարող են դառնալ անուղղակի գրաքննության եղանակներ:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 2020 թվականի թիվ 2317 բանաձևով արձանագրվել է, որ առանց խոսքի ազատության իրավունքի և ազատ, անկախ ու բազմակարծիք լրատվամիջոցների չկա իրական ժողովրդավարություն: Բանաձևով նաև արձանագրվել է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համատեքստում՝ *անդամ պետությունները լրագրողների և լրատվամիջոցների այլ ներկայացուցիչների անվտանգ գործունեության համար պատշաճ իրավական հիմք ստեղծելու դրական պարտավորություն ունեն:*

Այդպիսով, խոսքի ազատությունը նպաստում է ողջամիտ հանրային բանավեճին, որն իր հերթին բազմակարծության, հանդուրժողականության վրա հիմնված

ժողովրդավարական հասարակության նախադրյալ է: Լրագրողների ու մամուլի մասնակիցների այդ իրավունքին ցանկացած միջամտություն ունենում է սոցիալական հետևանքներ, քանի որ նման սահմանափակումը միջամտում է նաև տեղեկություններ փնտրելու և ստանալու այլոց իրավունքին ու հանրային բանավեճին:

Միևնույն ժամանակ, խոսելով հանրության համար հետաքրքրություն ներկայացնող հարցերի լուսաբանման գործընթացում լրագրողների գործունեության անխոչընդոտ իրականացման սկզբունքի մասին առհասարակ՝ հարկ ենք համարում անդրադառնալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Սելմանին և այլք ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության գործով վճռին[2]:

Այսպես, Դատարան դիմած անձինք հավատարմագրված լրագրողներ են, որոնք իրավունք են ունեցել ռեպորտաժ վարել խորհրդարանից: 2012 թվականի դեկտեմբերի 24-ին պետության խորհրդարանում լսումներ են անցկացվել 2013 թվականի պետական բյուջեի օրենքի վերաբերյալ: Դիմումատուները, մյուս լրագրողների հետ միասին, ռեպորտաժ են վարելիս եղել խորհրդարանի պատշգամբից, որը գտնվել է լիագումար նիստերի դահլիճի վերևում, որտեղ նստած էին խորհրդարանի անդամները: Քննարկումներն անց են կացվել լարված մթնոլորտում, որի արդյունքում խորհրդարանի անվտանգության աշխատակիցները սրահից հարկադրաբար դուրս են բերել դիմումատուներին և այլ լրագրողներին: Ըստ պատասխանող կառավարության՝ անվտանգության աշխատակիցները սրահում գտնվող լրագրողներին տեղեկացրել են, որ նրանք պետք է լքեն այն՝ իրենց իսկ անվտանգության նկատառումներից ելնելով: Մինչդեռ, դիմումատուները հերքել են, որ իրենց բացատրվել են իրենց դուրս բերելու պատճառները:

Սույն գործով Եվրոպական դատարանը, ընդգծելով լրագրողների գործունեության կարևորությունը ժողովրդավարության կայացման գործում, արձանագրել է, որ Կառավարությունը չի կարողացել համոզիչ կերպով ապացուցել, որ պատգամավորների գործողություններով վտանգվել են լրագրողների կյանքն ու առողջությունը, և որ սրահից դիմումատուների հեռացումն անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակության մեջ և բավարարում էր «անհետաձգելի սոցիալական անհրաժեշտության» պահանջին: Արդյունքում, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

[2] Տե՛ս Սելմանին և այլք ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության (SELMANI AND OTHERS v. THE FORMER YUGOSLAV REPUBLIC OF MACEDONIA) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2017 թվականի մայիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 67259/14, հասանելի է https://hudoc.echr.coe.int/fre?i=001-170839 հղումով:

Մեկ այլ՝ Շապովալովն ընդդեմ Ուկրաինայի Հանրապետության վճռով[3] Եվրոպական դատարանն արձանագրել է, որ տեղեկատվության հավաքագրումը կարևոր նախնական քայլ է լրագրության մեջ և հանդիսանում է մամուլի ազատության անբաժանելի մաս: Դատարանն ընդգծել է, որ հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության հասանելիությունը խոչընդոտելու նպատակով ստեղծված խոչընդոտները կարող են խանգարել զանգվածային լրատվության միջոցներում կամ հարակից ոլորտներում աշխատող անձանց՝ զբաղվելու նմանատիպ հարցերով: Արդյունքում, նրանք այլևս չեն կարող խաղալ իրենց կենսական դերը որպես «հասարակական հսկիչներ», ինչը կարող է բացասաբար ազդել ճշգրիտ և հավաստի տեղեկատվություն տրամադրելու նրանց կարողության վրա[4]:

Վերոգրյալ իրավակարգավորումների, Եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համադրված ուսումնասիրության արդյունքում կարող ենք արձանագրել, որ լրագրողների գործունեության ընթացքում նրանց իրավունքների կամ ազատությունների սահմանափակումներ հնարավոր են միայն այն դեպքում, երբ դրանք.

- ունեն իրավական հիմք, այսինքն՝ նախատեսված են օրենքով (ընդ որում՝ ըստ Եվրոպական դատարանի իրավաբանության՝ պետք է ուշադրություն դարձնել նաև օրենքի որակին. այն պետք է ունենա առավելագույն հստակություն և բացառի դրա կիրառության ընթացքում կամայական մեկնաբանության կամ անորոշ ընկալման տեղիք տվող դրույթներ, հասանելի լինի շահագրգիռ անձի համար և կանխատեսելի՝ դրա հետևանքների առումով: Ընդ որում՝ հայեցողության շրջանակը և դրա կիրառման եղանակը պետք է սահմանվեն բավարար հստակությամբ՝ հաշվի առնելով միջամտության օրինական նպատակը՝ անհատին կամայական միջամտությունից պատշաճ պաշտպանություն տրամադրելու նպատակով),
- ունեն մեկ կամ մի քանի օրինական նպատակ. ընդ որում, պետության հայտարարած իրավաչափ նպատակին հասնելու համար գործադրվող սահմանափակումները պետք է կիրառվեն հնարավորինս նվազագույն չափով (less restrictive), իսկ պետության կողմից ձեռնարկված միջոցառումները պետք է լինեն վերջին միջոց (last resort), առանց որի հնարավոր չէ վերահսկել իրավիճակը,

[3] Տե՛ս Շապովալովն ընդդեմ Ուկրաինայի Հանրապետության (SHAPOVALOV v. UKRAINE) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 31-ի վճիռը, գանգատ թիվ 45835/05, կետ 68, հասանելի է https://hudoc.echr.coe.int/?i=001-112570 հղումով:

[4] Տե՛ս «Տարշաշագ ա սաբադշագյոգոկերտ»-ն ընդդեմ Հունգարիայի (TÁRSASÁG A SZABADSÁGJOGOKÉRT V. HUNGARY) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի հուլիսի 14-ի վճիռը, գանգատ թիվ 37374/05, կետ 38, հասանելի է https://hudoc.echr.coe.int/eng?i=001-92171 հղումով:

➢ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում այլոց իրավունքների պաշտպանության և հանցագործությունների կանխման համար:

Հարկ է նկատի ունենալ, որ միջազգային պրակտիկայում ընդունված է նաև պետական մարմիններում լրագրողների համար հատուկ առանձնացված հատվածների/սենյակների առկայությունն ու նիստի հրապարակայնության ապահովման նպատակով տեխնիկական միջոցների օգտագործումը:

Վերջիններիս ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լրագրողական գործունեություն իրականացնելու նպատակով կարող են նախատեսվել հատուկ պայմաններ՝ առանձնացված հատուկ տարածքներ կամ տեխնիկական միջոցներ:

Այս առումով ուշագրավ է բրիտանական փորձը, որն առավել մանրամասն ներկայացված է դատարանների և տրիբունալների գործունեության՝ մեդիա հասանելիության վերաբերյալ ընդհանուր ուղեցույցում:

Այսպես, օրինակ, Մեծ Բրիտանիայում, որպես կանոն, գործում է բաց արդարադատության սկզբունքը, որի շրջանակներում երաշխավորվում է նաև լրագրողների անխոչընդոտ գործունեությունն արդարադատության իրականացման գործընթացում: Այս սկզբունքը ենթադրում է, որ արդարադատության իրականացումը պետք է լինի հրապարակային, և հանրությունն ու լրատվամիջոցները պետք է ունենան անձամբ դատական նիստերին ներկա գտնվելու, իսկ լրատվամիջոցները՝ նաև վարույթը ամբողջական ու միաժամանակյա ներկայացնելու հնարավորություն: Ցանկացած սահմանափակում այս կանոնից պետք է լինի բացառություն և հիմնված լինի անհրաժեշտության վրա[5]:

Մեծ Բրիտանիայում դատարանները հիմնականում նիստերի դահլիճում ունեն լրատվամիջոցների համար նախատեսված տեղեր, և վերջիններս պետք է ունենան այդ տեղերը զբաղեցնելու նախապատվություն: Լրատվամիջոցները օրենքով իրավասու են լսելու ու ներկա գտնվելու բոլոր դռնբաց նիստերին, այդ թվում՝ տեղում տեսաձայնագրառման սահմանափակումներ ունեցող նիստերին: Միևնույն ժամանակ, վերջիններս չպետք է հարկադրված լինեն հետևելու դատական նիստին ընդհանուր սրահից՝ հաշվի առնելով դատական նիստին կողմերի հարազատների կողմից ճնշման ենթարկվելու հավանական ռիսկը:

Ի լրումն դատական նիստերի դահլիճից լրատվամիջոցների համար հատկացված տեղերում դատական նիստին հետևելու ընթացակարգերի՝ լրատվամիջոցները կարող են միջնորդել դատարանին դատական նիստերին հետևելու նաև ամբողջությամբ հեռավար

[5] Հասանելի է https://www.judiciary.uk/wp-content/uploads/2022/09/Reporting-Restrictions-in-the-Criminal-Courts-September-2022.pdf հղումով:

կամ հիբրիդային եղանակով, ինչի վերաբերյալ որոշում կայացնելը դատարանի հայեցողության շրջանակներում է:

Այն դեպքերում, երբ դատական նիստերի դահլիճում լրատվամիջոցների համար առանձնացված են հատուկ տեղեր, ապա դրանք կարող են զբաղեցվել միայն լրատվամիջոցների կողմից: Հնարավորության դեպքում լրատվամիջոցների համար պետք է նախատեսված լինի առանձին տարածք կամ սենյակ:

Ուշագրավ է Մեծ Բրիտանիայի փորձը, որն անդրադառնում է դատարաններում քննվող՝ լրատվամիջոցների համար առանձնահատուկ հետաքրքրություն ունեցող գործերին, երբ դատարանում առկա են պահանջարկից ավելի քիչ թվով տեղեր: Այս դեպքերում դատարաններն ունեն հատուկ ընթացակարգեր մշակելու պարտականություն (designated live-streaming premises)՝ արդարության սկզբունքի հիման վրա լրատվամիջոցների համար տեղերը բաշխելու, ուղիղ հեռարձակման համար նախատեսված տարածքներով ապահովելու միջոցով[6]:

Նշվածի վերաբերյալ հարկ է նկատել, որ դատավարության հեռարձակումները լրատվամիջոցների համար առանձնացված սենյակներում իրականացնելու կարգավորումներ առկա են Գերմանիայում, բայց լրատվամիջոցների համար առանձնացված սենյակում հեռարձակում տրամադրելու կամ ընդհանրապես հեռարձակումը կամ ձայնագրումը թույլատրելու որոշումը թողնված է դատավորի հայեցողությանը:

Ինչ վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդի նիստերին, ինչպես նաև ընդհանուր առմամբ, դատական նիստերին լրագրողների մասնակցության առանձնահատուկ կարգավորումներին, ապա հարկ է հիշատակել *Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ Դատական խորհուրդների էվոլյուցիայի և անկախ ու անաչառ դատական համակարգում վերջիններիս դերի վերաբերյալ թիվ 24 կարծիքը*[7]՝

➢ Դատական խորհուրդը, հանրային շահից ելնելով, որպես դատական համակարգի նկատմամբ հանրության վստահության անհրաժեշտ տարր, պետք է գործի թափանցիկության սկզբունքին համահունչ և լինի հաշվետու իր գործողությունների համար:

---

[6] Հասանելի է https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/1132175/HMCTS729_HMCTS_media_guidance_Dec_2022_v3.pdf հղումով:

[7] Հասանելի է https://rm.coe.int/opinion-no-24-2021-of-the-ccje/1680a47604 հղումով:

➢ Դատական խորհուրդները պետք է գործեն թափանցիկ գործելաոճով՝ պատճառաբանելով ու հիմնավորելով իրենց որոշումներն ու ընթացակարգերը և այս եղանակով լինեն հաշվետու: Այս տեսակի հաշվետվողականությունը հատուկ կարևորություն ունի պետական իշխանության և քաղաքացիական հասարակության երկխոսության համատեքստում:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի անդամ երկրներին դատավորների վերաբերյալ CM/Rec(2010)12 հանձնարարականով[8] *էլ սահմանվում է, որ՝*

➢ դատական խորհուրդներն օրենքով կամ Սահմանադրությամբ ստեղծված անկախ մարմիններ են, որոնք ձգտում են ապահովել դատական համակարգի և առանձին դատավորների անկախությունը և դրանով իսկ նպաստել դատական համակարգի արդյունավետ գործունեությանը:

➢ դատական խորհուրդները պետք է դրսևորեն թափանցիկության ամենաբարձր աստիճանը դատավորների և հասարակության նկատմամբ՝ մշակելով նախապես սահմանված ընթացակարգեր և պատճառաբանված որոշումներ:

Միևնույն ժամանակ, հարկ է ուսումնասիրել նաև լրագրողական գործունեության իրավական կանոնակարգմանն ուղղված ներպետական իրավական կարգավորումները, որոնց շարքում տեղ գտած մի շարք իրավական ակտերից է՝ *Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի 2019 թ. հունվարի 11-ի ԲԴԽ-2-Ն-1 որոշումը՝ ուղղված Զանգվածային լրատվության միջոցների հետ Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների փոխհարաբերության կանոնները սահմանելուն*[9]*:*

Նշված որոշման 17-րդ կետը սահմանում է՝ *լրագրողների անարգել ներկայությունը դատական նիստերին և մուտքը դատարանի դահլիճ հետևյալ կարգավորումների տրամաբանությամբ. Լրագրողները դռնբաց դատական նիստում, առանց որևէ խտրականության և առանց նախնական հավատարմագրման, կարող են անարգել ներկա գտնվել դատական նիստերին: Նրանք կարող են մնալ նիստերի դահլիճում այնքան ժամանակ, քանի դեռ նիստերի դահլիճում են գտնվում նիստին ներկա գտնված մյուս անձինք: Նիստերի դահլիճում, հնարավորության սահմաններում, անհրաժեշտ է լրագրողների գործունեության համար ապահովել պայմաններ և հատուկ այդ նպատակի համար նախատեսված տեղ:*

Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների շենքերի անցագրային կարգը, ինչպես նաև անվտանգության կանոնները սահմանված են *«Բարձրագույն դատական*

---

[8] Հասանելի է https://rm.coe.int/cmrec-2010-12-on-independence-efficiency-responsibilites-of-judges/16809f007d հղումով:

[9] Հասանելի է https://court.am/hy/decisions-single/84 հղումով:

խորհրդի և դատարանների շենքերի անցագրային կարգը և անվտանգության կանոնները սահմանելու մասին» ԲԴԽ-ի 2019 թվականի հունվարի 24-ի թիվ ԲԴԽ-5-Ն-2 որոշմամբ:

Նշված որոշման հավելված 2-ի 47-րդ կետի համաձայն՝ *այն դեպքերում, երբ դատական նիստերի դահլիճի տարածքը չի բավականացնում նիստին ժամանած բոլոր անձանց, ապա անվտանգության նկատառումներից ելնելով՝ դատական կարգադրիչի կողմից դատական նիստը նախագահողի թույլտվությամբ սահմանափակվում է որոշակի քանակի անձանց մուտքը նիստերի դահլիճ: Նշված դեպքում դատավարության կողմերին դատական կարգադրիչները կարող են տրամադրել դատական նիստերի դահլիճում առկա տեղերի քանակին հավասար կտրոններ՝ նիստին ժամանած անձանց տրամադրելու նպատակով:*

Նույն որոշման հավելված 2-ի 68-րդ կետի համաձայն՝ *զանգվածային լրատվության միջոցների մուտքն ու ելքը պետք է իրականացվի այնպես, որ չխաթարվի ինչպես վերջիններիս մասնագիտական պարտականությունների կատարումը, այնպես էլ Բարձրագույն դատական խորհրդի կամ դատարանի բնականոն գործունեությունը:*

Նույն հավելվածի 71-րդ կետով ամրագրվում է, որ *զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար դատական նիստերի դահլիճներում նախատեսվում են հարմարեցված տեղեր:*

Բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-2-Ն-1 որոշման մի քանի այլ կետերով նախատեսվում են լրագրողների բնականոն մասնակցությունն ապահովելու ընթացակարգեր, մասնավորապես՝ նույն որոշման հավելվածի 27-րդ կետով սահմանվում է, որ *Մամուլի ծառայությունը նախապես՝ Բարձրագույն դատական խորհրդի հերթական դռնբաց նիստից առնվազն 24 ժամ առաջ, դատական իշխանության պաշտոնական «court.am» կայքում զետեղում է նիստին զանգվածային լրատվության միջոցների ներկա լինելու մասին հաղորդագրություն* (այսուհետ՝ Հաղորդագրություն): Արտահերթ նիստի պարագայում հաղորդագրությունը զետեղվում է հնարավորինս սեղմ ժամկետում:

Ըստ նույն որոշման հավելվածի 28-րդ կետի՝ Հաղորդագրության մեջ նշվում են՝

1) Բարձրագույն դատական խորհրդի նիստի վայրը և ժամանակը,

2) Բարձրագույն դատական խորհրդի նիստի օրակարգի այն հարցերը, որոնց քննարկումն ընթանալու է Բարձրագույն դատական խորհրդի նիստում՝ զանգվածային լրատվության միջոցների մասնակցությամբ,

3) Բարձրագույն դատական խորհրդի նիստի՝ լուսաբանման ենթակա այն հատվածը, երբ նիստը չի ընթանալու զանգվածային լրատվության միջոցների կողմից լուսա-տեսանկարահանմամբ, այդ թվում՝ անմիջապես ուղիղ եթեր հեռարձակմամբ,

4) Բարձրագույն դատական խորհրդի նիստի լուսաբանմանը մասնակցող լրագրողների առավելագույն քանակը: Առավելագույն քանակը որոշվում է՝ նիստի համար նախատեսված սրահի փաստացի պայմաններից ելնելով: Առավելագույն քանակի շրջանակում լրագրողների բնականոն գործունեությունն ապահովելու և մասնակցությունը կանխատեսելի դարձնելու նկատառումով ընտրության հիմքում դրվում է հայտերի գրանցման հերթական համարը:

Նույն հավելվածի 29-րդ կետով ամրագրվում է, որ Բարձրագույն դատական խորհրդի նիստին մասնակցում են Հաղորդագրությունից հետո՝ մինչև առավելագույն քանակը լրանալը, էլեկտրոնային կարգով հայտեր ներկայացրած լրատվության միջոցները: Առավելագույն քանակը լրանալուց հետո, Մամուլի ծառայությունը անհապաղ տեղեկատվություն է զետեղում դատական իշխանության պաշտոնական կայքում՝ նշելով հերթագրված զանգվածային լրատվության միջոցների ցանկը, որից հետո հերթագրման գործընթացը դադարեցվում է:

Ըստ նույն հավելվածի 47-րդ կետի՝ Բարձրագույն դատական խորհուրդը կամ Դատական դեպարտամենտը՝

1) որևէ ձևով կամ եղանակով չեն կարող գրաքննություն իրականացնել լրագրողի մասնագիտական գործունեության նկատմամբ,

2) գրանցված բոլոր լրագրողների համար ապահովում են միասնական, ոչ խտրական պայմաններ,

3) չեն կարող խոչընդոտել լրագրողի օրինական գործունեությանը:

Վերոգրյալի հաշվառմամբ հնարավոր է եզրահանգել, որ գործող կարգավորումները նախատեսում են երկուստեք իրավունքներ և պարտականություններ՝ ինչպես լրագրողական գործունեություն իրականացնող անձանց, այնպես էլ վերջիններիս անխոչընդոտ գործունեությունը երաշխավորելու պարտականություն ունեցող պետական մարմինների համար:

Մասնավորապես, հիշատակվող որոշումները նախատեսում են հստակ ընթացակարգեր, որոնք ենթակա են պահպանման ինչպես նիստերի անցկացմանը նախորդող, այնպես էլ հենց նիստի օրը դահլիճ մուտք գործելու համատեքստում:

Բարձրագույն դատական խորհրդի հիշյալ որոշումներով, ինչպես նաև հիշատակված միջազգային և ներպետական չափորոշիչներով սահմանված կարգավորումների գործնական կիրառման հնարավոր խնդիրները վեր հանելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հարցում է ուղարկվել Բարձրագույն դատական խորհուրդ, որը նպատակ էր հետապնդում պարզելու, թե

որքանով են սահմանված ընթացակարգերը պահպանվել խնդրո առարկա դեպքերի շրջանակներում:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանի հարցմամբ ակնկալվում էին տեղեկություններ՝ լրագրողական գործունեության հնարավոր սահմանափակումների նույնական պրակտիկայի կիրառման, համապատասխան որոշումներով սահմանված հայտարարությունների տեղադրման, հայտերի ներկայացման, հերթագրումների իրականացման, ինչպես նաև դրանց դադարեցման, լրատվամիջոցների կողմից սահմանված կարգով հայտեր ներկայացրած լինելու պարագայում մասնակցության անհնարինության կամ արգելքի հիմքերի, ինչպես նաև նիստերի դահլիճում անձանց գտնվելու նախապատվության վերաբերյալ:

Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի դատական դեպարտամենտի պատասխան գրությամբ ներկայացվել են պարզաբանումներ առ այն, որ հուլիսի 3-ին անցկացվող թվով 3 նիստերին ներկայացված լրագրողների մուտքը Խորհրդի վարչական շենք չի սահմանափակվել: Ըստ պարզաբանման՝ Խորհրդի նիստերի դահլիճում միայն սահմանափակ թվով անձանց միաժամանակյա մուտքը և ներկայությունն է հնարավոր ապահովել:

Միևնույն ժամանակ, Բարձրագույն դատական խորհրդին ուղղված Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան ներկայացվել է, թե ընդհանուր առմամբ դատական դռնբաց նիստերի հրապարակայնության ապահովման սկզբունքի պահպանմանն ուղղված ինչ քայլեր են փաստացի ձեռնարկվել՝ մասնավորապես հիշատակելով նիստի հեռարձակման և տեսաձայնագրության հասանելիության ապահովմանն ուղղված գործողությունները: Այդուհանդերձ, ներկայացված պատասխանով Դատական դեպարտամենտը չի անդրադարձել լրագրողի մասնակցության հայտերի գրանցման՝ վերը նշված որոշմամբ սահմանված ընթացակարգերի պահպանման հարցին:

Բարձրագույն դատական խորհրդում քննվող կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործերի վերաբերյալ ժամանակացույցի տեղադրումն ունի կարևոր դերակատարություն Խորհրդի գործունեության հաշվետվողականությունն ու թափանցիկությունը երաշխավորելու տեսանկյունից: Միևնույն ժամանակ, Դատական դեպարտամենտի կողմից ներկայացված պատասխանում տեղ գտած էլեկտրոնային հղման ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ ժամանակացույցի տեղադրումն ինքնին չի կարող դիտարկվել իբրև վերը նշված որոշմամբ սահմանված՝ զանգվածային լրատվության միջոցների ներկա լինելու մասին հաղորդագրության հրապարակման կարգով ներկայացվող

ընթացակարգի ապահովում՝ թե՛ հաղորդագրությանը ներկայացվող պահանջների պահպանման և թե՛ հետադարձ կապի հնարավորության բացակայության առումով:

Չեկույցում տեղ գտած միջազգային իրավական, ինչպես նաև ներպետական փաստաթղթերը հիմք են տալիս եզրակացնելու, որ վերջիններս պարունակում են անհրաժեշտ կարգավորումներ պետական մարմինների բնականոն, ինչպես նաև լրագրողական գործունեության անխոչընդոտ իրականացման համար: Բոլոր դերակատարների կողմից դրանց պահպանումը կարևոր նշանակություն ունի նաև իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքների պահպանումը երաշխավորելու տեսանկյունից: Հակառակը կարող է հանգեցնել ինչպես պետական մարմինների բնականոն գործունեության, այնպես էլ լրատվական գործունեության անխոչընդոտ իրականացման տեսանկյունից խնդրահարույց իրավիճակների:

Կարևոր է, որ պետական մարմինները պահպանեն նիստին ներկա գտնվելու նպատակով զանգվածային լրատվության միջոցների գրանցման, նիստի լուսաբանմանը մասնակցող լրագրողների առավելագույն քանակի կանխորոշման, նիստի մասնակիցների միջև խտրականության բացառման առնչությամբ միջազգային չափանիշներն ու վերը նշված ներպետական իրավակարգավորումները, անհրաժեշտության դեպքում մշակեն և գործադրեն դրանց պատշաճ իրացմանը նպատակաուղղված կառուցակարգեր: Կարևոր է նաև զանգվածային լրատվության միջոցների կողմից նշված ընթացակարգերի պահպանումը: Համատեղ աշխատանքի միայն նման մշակույթի պայմաններում է, որ հնարավոր է երաշխավորել ինչպես պետական մարմինների բնականոն գործունեությունն, այնպես էլ լրատվական գործունեության անխոչընդոտ իրականացումը:

Անհրաժեշտ է առաջնահերթ ջանքեր գործադրել անհրաժեշտ իրավակարգավորումներն ու կառուցակարգերը բոլոր դերակատարների կողմից պատշաճ իրացնելու, արդյունքում՝ լրագրողների համար մասնագիտական գործունեության գործնական կանխատեսելիությունը և պետական մարմինների բնականոն գործունեությունն ապահովելու ուղղությամբ:

Քննարկվող իրավիճակում դատական նիստն ուղիղ հեռարձակվել, իսկ տեսաձայնագրությունը հաջորդիվ հրապարակվել է[10]: Ուստի առաջ եկած հիմնական խնդիրը վերաբերում է ոչ թե դատական քննության հրապարակայնությանն ինքնին, այլ լրագրողական գործունեության անխոչընդոտ իրականացման, պետական մարմնի բնականոն գործունեության ապահովման, ինչպես նաև դատական իշխանություն-

[10] Հասանելի է https://www.youtube.com/watch?v=r7WbCcBq8LE հղումով:

զանգվածային լրատվության միջոցներ փոխգործակցության բնագավառում առկա բացերին:

Վեր հանված խնդիրների հաղթահարման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացվում են ներքոհիշյալ առաջարկությունները.

- ✓ Նկատի ունենալով մամուլի ազատության և լրագրողական գործունեության կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում՝ դատական նիստերի դահլիճում կարելի է նախատեսել լրագրողների համար առանձնացված հատուկ տեղեր՝ նրանց աշխատանքային անհրաժեշտ պայմանները ապահովելու նպատակով:
- ✓ Բացառիկ դեպքերի համար կարելի է նախատեսել նիստը հեռավար կարգով դիտարկելու նպատակով հատուկ հարմարեցված տարածք: Ընդ որում՝ նշված քայլերը պետությունը պետք է ձեռնարկի կանխավ, այլ ոչ կոնկրետ իրավիճակին արձագանքելու նպատակով՝ նկատի ունենալով իրավական կանխատեսելիության և որոշակիության սկզբունքների պահպանման կարևորությունը:
- ✓ Անհրաժեշտ է պահպանել զանգվածային լրատվության միջոցների ներկա լինելու մասին հաղորդագրության հրապարակման, նիստին ներկա գտնվելու նպատակով զանգվածային լրատվության միջոցների գրանցման ընթացակարգերը:
- ✓ Անհրաժեշտ է մշակել և իրացնել դատական նիստին մասնակցելու նպատակով գրանցված զանգվածային լրատվության միջոցների և նիստի այլ մասնակիցների միջև դատական նիստին մասնակցության առումով խտրական վերաբերմունքը բացառելուն ուղղված կառուցակարգեր:
- ✓ Կախված գործի նկատմամբ հանրային հետաքրքրությունից՝ կարևոր է նախապես կանխորոշել նիստի մասնակիցների հնարավոր թիվն ու նախապես իրականացնել նիստի հրապարակայնության երաշխավորմանն ուղղված միջոցառումները:
- ✓ Լրագրողական գործունեության ցանկացած սահմանափակում պետք է լինի իրավաչափ, իսկ նման սահմանափակման ցանկացած հնարավորություն պետք է լինի կանխատեսելի և որոշակի: Այդ առումով կարևոր է քննարկվող հիմնախնդրի կանոնակարգմանն ուղղված կոնկրետ իրավակարգավորումների առկայությունն ու պահպանումը:
- ✓ Բոլոր դերակատարները պետք է խստորեն պահպանեն իրենց վերաբերելի՝ էթիկայի և վարքագծի կանոնները:

Պաշտպանը հատուկ ընդգծում է. դատական իշխանություն – լրագրող փոխգործակցության պատշաճ մշակույթի առկայության պայմաններում է միայն հնարավոր լիարժեքորեն երաշխավորել դատական իշխանության գործունեության թափանցիկությունն ու հանրային հաշվետվողականությունը, լրագրողական գործունեության անխոչընդոտ իրականացումն ու պետական մարմինների բնականոն գործունեությունը: